ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի հոկտեմբերի 2-5-ը Կիպրոսի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը- Զարուհի Բաթոյան**

2. **Զբաղեցրած պաշտոնը- ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ**

3. **Գործուղման վայրը և ժամկետները-** 2018 թվականի հոկտեմբերի 2-ից 5-ը: Կիպրոսի Հանրապետություն, Նիկոսիա

4. **Հրավիրող կողմը-** ԵՄ SOCIEUX+

5. **Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/.*

Գործուղման նպատակն էր ուսումնասիրել Կիպրոսի հաշմանդամության գնահատման, ծառայությունների մատուցման համակարգը:

Հայաստանում ներկայումս վերանայվում է հաշմանդամության գնահատման համակարգը, որի նպատակն է ներդնել անձի կարիքների գնահատման և ըստ գնահատված կարիքի ծառայությունների տրամադրման համակարգ (նոր մոդել)՝ հիմնված Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների և մոտեցումների վրա: Այս համատեքստում իրականացվել են տարբեր աշխատանքներ, փորձարկումներ, սակայն նոր մոդելի գործնական ներդրման համար առկա են բազմաթիվ խնդիրներ ինչպես անձի կարիքների գնահատման գործիքների կիրարկման, այնպես էլ գնահատումն իրականացնող տարբեր մասնագետների (բժիշկներ, վերականգնողաբաններ, սոցիալական աշխատողներ և այլն) ներգրավման, նրանց աշխատանքային, վարձատրության և այլ չափանիշների մշակման հարցերում:

Մոդելի ներդրման աշխատանքներին աջակցել են ՄԱԿ-ի գրասենյակները՝ UNICEF, UNDP: Հետագա աշխատանքները ճիշտ ուղղությամբ զարգացնելու նպատակով, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը դիմել է Եվրոպական հարևանության գործիքի ներքո իրականացվող SOCIEUX+ տեխնիկական աջակցության ծրագրին՝ ակնկալելով փորձագիտական աջակցություն

և ԱՀԿ ՖՄԴ մոդելը հաջողությամբ իրականացնող երկրների փորձի ուսումնասիրություն:

6. Քննարկված թեմաները.

1) Կիպրոսի Հանրապետությունում հաշմանդամության գնահատման համակարգի կառուցվածքը
2) Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող աջակցության իրավական դաշտը, փաստացի տրամադրվող նպաստները, դրամական այլ հատկացումները, ծառայությունները
3) Հաշմանդամության գնահատման իրավական կարգավորումները
4) Հաշմանդամության գնահատման պրակտիկ գործընթացը
5) Հաշմանդամության գնահատման գործիքներն ու չափանիշները
6) Հաշմանդամության գնահատման արդյունքում հավաքագրվող տեղեկատվության մեխանիզմները, տեղեկատվական համակարգի հնարավորությունները և բաղադրիչները

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Առաջին օրը այցելել ենք Նիկոսիայի հաշմանդամության գնահատման կենտրոն, որտեղ հանդիպել ենք Կիպրոսի աշխատանքի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման վարչության տնօրեն տիկին Քրիստինա Ֆլորենցու-Կակուրիի հետ: Քննարկվող թեման՝ «Կիպրոսի հաշմանդամության և ֆունկցիաների գնահատման համակարգի ներկայացում»: Տնօրենը ներկայացրել է Կիպրոսի հաշմանդամության և ֆունկցիաների գնահատման համակարգի կառուցվածքը, գործառույթները, հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող աջակցության և ծառայությունների ձևերը, ինչպես նաև սոցիալական պաշտպանության համակարգը: Քննարկվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման (ԱՀԿ ՖՄԴ) գաղափարախոսության և սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության գնահատման մոդելի առանձնահատկությունները և առավելությունները: Պատվիրակության համար համոզիչ փաստ է, որ այս մոդելը համահունչ է ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի պահանջներին և բխում է այդ կոնվենցիայի վավերացմամբ Հայաստանի

Հանրապետության ստանձնած պարտավորություններից: Նախ՝ անձը գնահատվում է բազմակողմանի՝ բժշկական և սոցիալական բաղադրիչներով:

Ընդ որում գնահատմանը մասնակցում են բժիշկներ և սոցիալական աշխատողներ, որոնք գնահատում են առողջական խնդիրը և դրա հետևանքով առաջացած ֆունկցիոնալությունը, ինչպես նաև երաշխավորում են այն ծառայությունները (ծառայությունների փաթեթը), որոնք անհրաժեշտ են ֆունկցիոնալ սահմանափակումները նվազեցնելու համար:

Հանդիպել ենք աշխատանքի նախարարության ներառման հարցերով ավագ պաշտոնյայի տեղակալ տիկին Վասիլիկի Ֆրագակիի հետ: Թեման՝ «Հաշմանդամության գնահատման մեխանիզմի գործընթացների ներկայացում և քննարկում»: Ներկայացվեց սոցիալական պաշտպանության համակարգը, մասնավորապես նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման վարչության առաքելությունը և տեսլականը:

Հանդիպել ենք նաև հաշմանդամության գնահատմանը մասնակցող մասնագետների հետ՝ բժիշկների և վերականգնողաբանների: Ներկայացված թեման է՝ «Գնահատման պատրաստում, վինետի մշակում և արձանագրության ընտրություն, հաշմանդամության գնահատում, հաշվետվությունների կազմում, միջամտության վերականգնողական պլաններ, գործի ներկայացում»

Մասնակցել ենք հաշմանդամության գնահատման գործընթացին և գործնականում ականատես եղել դրա իրականացման բոլոր փուլերին:
Այցելել ենք նաև Լիմասոլ քաղաքի հաշմանդամության գնահատման կենտրոն, հանդիպել տնօրենի հետ, քննարկել հաշմանդամության գնահատման գործընթացին առնչվող մանարամասներ: Տեղում ուսումնասիրել ենք գնահատման արդյունքում հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման մեխանիզմները, ծանոթացել էլեկտրոնային համակարգին:

Ուսումնասիրությունների արդյունքում ծագած բազմաթիվ հարցերի քննարկման նպատակով կրկին հանդիպել ենք աշխատանքի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման վարչության տնօրենի, ներառման հարցերով ավագ պաշտոնյայի տեղակալի, Նիկոսիայի հաշմանդամության գնահատման կենտրոնի տնօրենի հետ: Վերջիններիս կողմից ներկայացվեց ևս մեկ թեմա՝ «Հաշմանդամության գնահատման համակարգի օգտագործումը՝ որպես հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալական քաղաքականության աջակցման հարթակ: Գնահատման խառը հանձնաժողովներ (բժիշկներ և վերականգնողաբաններ) խնամքի

ծառայությունների, կենսագործունեության և զբաղվածության կարիքների գնահատման համար»:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա համագործակցության համար, մեթոդական նյութերի տրամադրման, կենտրոնի ստեղծման համար անհրաժեշտ ֆինանսական ծախսերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման, իրավական ակտերի փոխանակման առումով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հայաստանում հաշմանդամության գնահատման համակարգի բարեփոխումների շրջանակներում իրականացված աշխատանքների, փորձարկումների և նաև Կիպրոսում հաշմանդամության գնահատման համակարգում Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների գործնականում կիրառման փորձն ուսումնասիրելու արդյունքում առաջարկվում է Հայաստանում ստեղծել գնահատման կենտրոններ, որտեղ կգնահատվի հաշմանդամություն ունեցող անձի կարիքը՝ առողջական, գործունեության և մասնակցության, միջավայրային գործոնների համատեքստում: Բազմակողմանիորեն գնահատված կարիքին համապատասխան կերաշխավորվեն և կտրամադրվեն ծառայություններ՝ ապահովելով նրա սոցիալական ներառումը հասարակական կյանք:

10. Ստորագրությունը, ամսաթիվը: 17.10.2018